

## ԼԵՒՈՆ ԱՐՔԱՅԻ ՏՈՀՄԸ

Նոյն եր. 353.

Սուրբ ժողովն բարձրագոյն Խորհրդարանի սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի ընկալաւ զգիր Խնդրոյ ազնիւ Յօհաննէս տէր Խաչատուրեան Էլիմիրզովին Հաղագո տալոյ ինքեան զճըշ. մարիտ վկայութիւն՝ 'ի կողմանէ ազգաբանութեան իւրեանց որոյ վասն զոր ինչ գիտեմք մեք 'ի պատմագրաց և կամ լուեալ եմք յաւանդութեանց նախնեանց, գրեմք և վկայեմք ահս' ստուգապէս, արդ՝ Պատմութիւն Հայոց վասն երկոտասան աղնուական պատանդացն վրաց այսպէս դրէ. թագաւորն վրաց Դամթզյ անուն ունէր որդի մի Բէժան անուն գօղեցաւով Հարուածեալ, վասնորոյ առաքեաց զազգատոհմն իւր հանդերձ մետասան թաւադօք և ազնուականօք առ իշխանս Կարբւոյ. և թողեալ զնոսա պատանդս առ իշխանսն Հայոց, տարաւ զմարմին սրբոյն Գէորգեայ զօրավարին 'ի Թիֆլիզ 'ի բժշկութիւն որդւոյ իւրոյ, բայց մինչ մերձ եղեւ սուրբ մարմինն 'ի Թիֆլիզ, մեռաւ որդի թագաւորին և թագաւորն պատճառաւ մահու որդւոյ իւրոյ՝ զսուրբ մարմինն ըմբռունեալ, Խեցաց զայն 'ի Հայոց և առաքեաց յերկիրն Կածարէթու որ այժմ ասի Զխար և մասց անդէն մարմին սրբոյն մինչև ցայսօր: Վամայսորիկ իշխանք Հայոց ևս արգելին առ ինքեանս զազգատոհմն թագաւորին և զմետասան ազնուազգի պատանդ անձինսն: Նոյն ազգատոհմն թագաւորին որ կոչիւր Լազարէ միրզայ որդի Էլի. մրոպային, էր 'ի ցեղէ և 'ի զարմէ Լևոն Արքային վրաց Կախէթու բագրատունուոյ և թոռն նորին, որ և 'ի գալն իւր 'ի Հայաստան՝ անուանեցաւ Ղազար Բէկ ըստ յարմարութեան լեզուի Հայոց: Այն այս Ղազար բէկն որդի Էլի. միրզային և թոռն Լևոն արքային վրաց 'ի գալն իւր 'ի Հայաստան: յետ ինչ միջոցի ծնանի զորդի մի խաչատուր անուն, որ զնմանութիւն Հօրն բերեալ յինքեան, և երկելի գտեալ, կոչեցաւ յարգական անուամբ Խաչատուր բէկ. և եղեւ անուանի յոյժ յամենեսին առ հեռաւորս և առ մերձաւորս, թէ ըստ վայելչութեան բարեդիր կազմուածոյն և հասակին, և թէ ըստ բաղրութեան բարուցն: Այս Խաչատուր բէկ ծնաւ որդի մի Յակոբ անուն, որ և սա զօրաւոր գտեալ բանիւք և արդեամբ, անուանեցաւ յամենից

պարոն Յակոբ յարգական անուամբ։ Այս Յակոբ ծնանի զերիս որդիս, Մաղաք, Յօր և տէր Սարգիս, որոց ծնունդը և սերունդք գտանին և 'ի ներկայս յայլ և այլ կողմունս Մաղաք անդրանիկ որդին յակոբյ ծնանի զչորեսին որդիս՝ Ուղուրլու, Գասպար, Մելքոն և Բաղդասար, և եօթն դըտերս։ Ուղուրլու անդրանիկ որդին Մաղաքայ ծնանի զչորս որդիս՝ Մաղաք, Խաչատուր, Յօհաննէս և Գէորգ և Երկու դսաերս։ Գասպար Երկրորդ որդի Մաղաքայ ամուսնացեալ ըստ աշխարհի, մեռանի անորդի։ Մելքոն Երրորդ որդի Մաղաքայ ծնանի Երկու որդիս՝ Մարտիրոս և Աղաբեկ, Մարտիրոսն ամուսնացեալ ըստ աշխարհի, ծնանի Երկուս որդին Մելքոն և Գասպար։ Եւ Աղաբեկն ևս ամուսնացեալ ըստ աշխարհի և մեռանի անորդի։ Մաղաք անդրանիկ որդի Ուղուրլուի ծնաւ որդի մի Ուղուրլու անուն, և դուսար մի ևս։ Խաչատուր Երկրորդ որդի Ուղուրլուի ամուսնացեալ Եղե բահանայ Աստուծոյ բարձրելոյ և ծնաւ ուստերս և դսաերս, յորոց մացեալ է ուստար մի Յօհաննէս անուն, որ է ինդրող վկայութեան ազգաբանութեանս և դուսար մի ևս։ Յօհաննէս Երրորդ որդի Ուղուրլուի մենացեալ։ յաշխարհի և զհետ ընթացեալ կրօնաւորական կարգի, միաբանեցաւ աստ 'ի սուրբ Աթոռոս արարատեան։ Գէորգ չորրորդ որդի Ուղուրլուի ծնաւ ուստերս և դսաերս, յորոց մացեալ են ուստերը՝ Յովակիմ և Գրիգոր և դուսար մի ևս։ Զիթէպէտ վասն այսպիսի ազգաբանութեան սոցա Եղեալ է յառաջադշն ի ձեռս նախնեաց իւրեանց արձանագիրք և հրովարտակը հայերէն և վրացերէն, ևս և թուղթք պիտանիք, այսինքն զարալայք վասն ամենայն կալուածոց իւրեանց Եղելոց 'ի Կարբի և 'ի Վրացառւն, և յենթարկիլն իւրեանց զանազան փորձանաց ըստ փոփխութեան և ըստ բերմանս աշխարհի կորուսեալ են այնք ամենայն թուղթք և անհետ Եղեալ, և ամենայն կալուածք իւրեանց ևս իսպառ բանդեալ և ամայացեալ, բայց աւանդութեամբ նախնեաց և ծերունեաց Երկրին արարատեան և մանաւանդ ըստ պատմելոյ և ըստ վկայելոյ գրութեանց պատմաբանից, զծննդաբանութիւն իւրեանց սկսեալ 'ի Լազարէ Միրզայէն յորդույ Էլի՛-միրզային 'ի թոռանէ Լևոն Արքային վրաց, պահպանեալ են մինչև ցվերջին ծնունդս իւրեանց հանդերձ նշանակութեամբ և

յատկութեամբ սեպհական կալուածոց իւրեանց եղելոց 'ի կարքի և 'ի վրացտուն: Այլ և ընդ ժամանակս՝ ընդ այնուհի, յորում աղմկեալ էր աշխարհն արարատեան պէսպէս խովութեամբ և տառապակրութեամբ 'ի բռնտորէն նատր Շահայ, որէ Թահմազ զուլի և անմ, Հայրն յիշեալ տէր Խաչատուր բահանային ևս, որ է Ուղուրլու անդրանիկ որդին Մաղաքայ, փախստական լինի յերկիրն վրաց 'ի Ցըփ-խիս բաղաք, հանդերձ Գասպար, Մելքոն և Բաղդասար եղբարբէ իւրովք հինգ ամսօք յառաջ բան զմահ Հօրն իւրոյ Մաղաքայ յաւուրս մանկաժողով հրամանին նշյն նատր-շահայ, և բնակեալ անդ ամս բան, ամուսնանայ ընդ դստեր Զաքարիայ Հեղինար անուն և ծնանի որդիս և դստերս անդանօր, և 'ի վերադառնալն 'ի Ցիկիսայ կրկին յերևան յետ իրը բան ամաց, զօրանայ դարձեալ բարի անուամբ և յաջողութեամբ և լինի երկելի յոյժ 'ի մէջ ազգի իւրոյ և բնակչաց երկրին, յանուն որոյ՝ և ազգն կոչեցան յետոյ Ուղուրլուեանք, որպէս և մինչև ցայսօր 'ի բոլոր բնակչաց երկրին ազգ նորա և ծնունդը կոչին և անուանին Ուղուրլուեանք: Ահա այսպէս վերսիշեալ ազնիւ յօհաննէս տէր Խաչատուրեանն, և յազգէ և 'ի ցեղէ Լազարէ Միրզային որդւոյ Էլի միրզովին և թոռան Լւսն վրաց արբային. ուստի ըստ այսմ կոչի ևս Էլի միրզեան կամ Լազարէ միրզեան, ինքն և սմենայն ազգատոհմ իւր. զոր և մեք վասն ձըշմարտութեան բանից՝ որպէս և գրեցարն, նոյնպէս վկայեմբ ահա իսկական կնքովք և ստորագրութեամբ մերովք: յամի Տեսուն 1814, յամսեանն յունիսի 'ի սուրբ Կաթուղիկէն Էջմիածին:

Անդամբ սուրբ ժողովոյն բարձրագոյն Խորհրդարանի որբոյ կաթուղիկէ Էջմիածնի:

### ՈՒՈՒԲԻՆԵՍՆ ՏՈՀՄԸ

Յիսուսի Քրիստոսի ծառայ և շնորհիւ նորա Տէր Միքայէլ Կաթուղիկոս Ամենայն<sup>(\*)</sup> Հայոց, և ծոյրագոյն պարիգրդ Մեծին Կիլիկիոյ, և սպասաւոր սուրբ լուսաւորչի շնորհաձիր Աջոյն և յանուն Ամենասուրբ երրորդութեան հիմեալ վեհափառ Աստուածեան Մայր սուրբ Աթոռոյն:

Ցորմէ ժամանեսցէ գիր սիրոյ ողջունի և օր հնու-